



Մատչելի համայնք

Մրցույթ

ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

Մարտի 16, 2009թ.

Բովանդակություն

Կազմակերպության նկարագիր

- I. Իրավիճակի նկարագրություն
- II. Նպատակը և խնդիրները
- III. Ֆինանսավորվող գործունեություն
- IV. Մասնակիցների որակավորման չափանիշներ
- V. Առաջարկների գնահատման չափանիշներ
- VI. Գրամաշնորհի միջոցների օգտագործում
- VII. Որոշումների կայացման գործընթաց և մրցույթի ժամանակացույց
- VIII. Հայտերի ներկայացման կարգ
- IX. Հասցե և կոնտակտային տեղեկություններ

Կազմակերպության նկարագիր

ԱՄՆ ՄԶԳ Հայաստան, Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման (ՄՊՀՀ) ծրագիրը, որն իրականացվում է «Աեկոմ միջազգային զարգացում» (նախկինում՝ Սըրվիսիզ գրուփ ինք.) ընկերության կողմից, 2006թ. հոկտեմբերից մինչև 2011թ. սեպտեմբերը նպատակ ունի աջակցելու Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացմանը, հանրային-մասնավոր համագործակցության խթանմանը, ինչպես նաև սոցիալական ծառայություններ մատուցող պետական և հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացմանը:

Հայաստանում սոցիալական ոլորտի բարեփոխումների երկրորդ փուլին օժանդակելու նպատակով ՄՊՀՀ ծրագիրը տեխնիկական աջակցություն է տրամադրում սոցիալական պաշտպանության չորս հիմնական ոլորտներում: Ծրագրի վերջնականատակն է քաղաքացիների հիմնական սոցիալական կարիքների բավարարման հարցում նպաստել կայունության ձևավորմանը՝ միևնույն ժամանակ նվազեցնելով նրանց կախվածությունը պետական օժանդակությունից:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ԱՄՀՆ) գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառներում:

I. Իրավիճակի նկարագրություն

Հայաստանի Հանրապետությունում 2008թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվառված է 158758 հաշմանդամ, ինչը կազմում է բնակչության շուրջ 4%-ը, այդ թվում՝ 8690-ը մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաներ, շուրջ 2500 ողնուղեղային վնասվածք ունեցողներ, անդամահատվածներ և այլն:

ՀՀ գործող օրենսդրությամբ ամրագրված է, որ պետական մարմինները, ՀՀ տարածքում գործող բոլոր գործատուները հաշմանդամ անձանց համար պետք է ապահովեն սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու համար բարենպաստ պայմանների ստեղծումը:

Չնայած վերոնշյալին՝ ֆիզիկական միջավայրը մատչելի չէ հաշմանդամների համար, քանի որ հանրապետության բոլոր քաղաքներում բնակելի, ինչպես նաև հասարակական շենքերը, փողոցները, արտադրական, ուսումնական, մշակութային և մարզական շինությունները կառուցված են առանց հաշվի առնելու հաշմանդամ անձանց պահանջումները: Հաշմանդամների համար հարմարեցված հանրային օբյեկտների, սոցիալական ենթակառուցվածքների, բժշկական հաստատությունների թիվը սահմանափակ է: Սա մասամբ բացատրվում է նրանով, որ դեռևս ԽՍՀՄ ժամանակաշրջանից հաշմանդամները մեկուսացված էին հասարակությունից, գտնվում էին փակ հաստատություններում, և այդ պատճառով էլ հասարակությունն անտեղյակ էր հաշմանդամների հիմնախնդիրներին:

Հանրապետության բոլոր քաղաքների բնակելի և հասարակական շենքերը, ենթակառուցվածքները, փողոցները, արտադրական, ուսումնական, մշակութային և մարզական շինությունները հիմնականում կառուցված են առանց հաշվի առնելու հաշմանդամ անձանց հատուկ կարիքները:

Հաշմանդամ անձանց համար անհրաժեշտ քաղաքաշինական համապատասխան լուծումների բացակայությունը, փաստորեն, հանգեցրել է հաշմանդամների մեծամասնության արհեստական մեկուսացմանը հասարակական կյանքից, նրանց ֆիզիկական և ստեղծագործական ներուժն օգտագործելու կարողությունից: Սա այն հիմնական պատճառներից է, որի հետևանքով բազմաթիվ հաշմանդամ երեխաներ չեն հաճախել նախադպրոցական և դպրոցական ուսումնական հաստատություններ, ինչպես նաև աշխատունակ, բայց ներկա պայմաններում չաշխատող հաշմանդամների զգալի թվաքանակը:

Չնայած վերջին տարիներին ենթակառուցվածքները հաշմանդամներին հարմարեցնելու համար տարվող ակտիվ աշխատանքներին (վերակառուցվել են Երևանի կենտրոնական փողոցների մայթերն ու անցումները, ուսումնական և սպասարկման ոլորտի որոշ հաստատություններ համապատասխանեցվել են սայլակից օգտվող հաշմանդամներին)՝ դրանց թիվը դեռևս բավականին փոքր է (ՀՀ կառավարական 3-րդ շենք, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի վերականգնողական կենտրոն, ՄԿԽ Հետվնասվածքային վերականգնողական կենտրոն, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ և այլն):

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով հաշմանդամության ոլորտում տարվող քաղաքականությունը, որն ուղղված է հաշմանդամություն ունեցող անձանց ներառմանը հասարակություն, նրանց համար մատչելի միջավայր ապահովելուն՝ ակնհայտ է դառնում «Մատչելի համայնք» մրցույթի կարևորությունը, որը կարող է խթանել հաշմանդամություն ունեցող անձանց համայնքի կյանքում լիարժեք ներգրավելու օրինակելի փորձի ճանաչմանը և տարածմանը:

Հաշմանդամ անձանց ինտեգրումը հասարակություն և նրանց սոցիալական պաշտպանության խնդիրների լուծումը պահանջում է սոցիալական գործընկերության սկզբունքների կիրառում, ուստի կարևորվում է համայնքի և ՀԿ-ների ակտիվ համագործակցությունը:

II. Նպատակը և խնդիրները

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և ԱՄՆ ՄՁԳ Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման (ՄՊՀՀ) ծրագիրը հրավիրում են ՀՀ բոլոր քաղաքային և Երևան քաղաքի թաղային համայնքներին ներկայացնելու «Մատչելի համայնք» մրցույթի առաջարկներ համագործակցելով հասարակական կազմակերպությունների հետ: Սույն մրցույթի նպատակն է Հայաստանի Հանրապետության համայնքներում ստեղծել անխոչընդոտ միջավայր հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Սույն մրցույթի խնդիրներն են.

- Փողոցի երթևեկելի և հետիոտն գոտիները, ստորգետնյա և վերգետնյա անցումները, շենքերին ու շինություններին հարող տարածքները, հասարակական հանգստի վայրերը, սպորտային և մանկական խաղահրապարակներն ապահովել անհրաժեշտ թեքահարթակներով, ինչպես նաև լուսային, ձայնային և այլ նախազուշացման միջոցներով:
- Սոցիալական ենթակառուցվածքի շենքերն ու շինությունները հնարավորինս հարմարեցնել հաշմանդամների կարիքներին՝ ապահովելով նրանց ազատ տեղաշարժման համար անհրաժեշտ հնարավոր պայմաններ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և ԱՄՆ ՄՁԳ-ի Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման (ՄՊՀՀ) ծրագիրը մրցույթի արդյունքում կֆինանսավորեն այն ծրագրերը, որոնց կատարած աշխատանքները կհամապատասխանեն վերը նշված նպատակներին ու խնդիրներին: Ծրագիրը չի բացառում մի քանի հաղթողների հնարավորությունը:

Մրցույթի հաղթող կճանաչվի այն համայնքը /համայնքները/, որը առավելագույն չափով կիրականացնի ծրագրով նախատեսված աշխատանքները և առաջադրված խնդիրները:

III. Ֆինանսավորվող գործունեություն

Մրցույթում հաղթած համայնքին (համայնքներին) կտրամադրվի դրամաշնորհ տվյալ համայնքում ընտրված ՀԿ-ի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց համար անխոչընդոտ միջավայրի ստեղծման ուղղությամբ իրականացվող աշխատանքների համար:

- Թեքահարթակների կառուցում
- Ներշնչային պայմանների հարմարեցում
- Հարմարեցման աշխատանքներն իրականացնող շինարարների վերապատրաստում

IV. Մասնակիցների որակավորման չափանիշներ

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ բոլոր քաղաքային համայնքները և Երևան քաղաքի թաղային համայնքները՝ համագործակցելով հասարակական կազմակերպությունների հետ:

V. Առաջարկների գնահատման չափանիշներ

Առաջարկների անաչառ գնահատումն ապահովելու նպատակով ՀՀ ԱՍՀՆ և ԱՄՆ ՄՁԳ ՄՊՀՀ ծրագիրը հաշվի կառնեն հետևյալ չափանիշները.

I. Համայնքի կատարած աշխատանքների քանակը. 30%

- Հարմարեցված շենքեր և շինություններ,
- Հարմարեցված մայթեր, փողոցի երթևեկելի և հետիոտն գոտիներ,
- Հարմարեցված հասարակական հանգստի վայրեր, սպորտային և մանկական խաղահրապարակներ:

II. Համայնքի կատարած աշխատանքների որակը. 30%

- Հարմարեցման նպատակով կատարված աշխատանքների համապատասխանությունը գործող ստանդարտներին,
- Երևանից դուրս գտնվող տարածքային և տեղական համայնքների վրա ուշադրության կենտրոնացումը:

III. Սոցիալական գործընկերության սկզբունքների կիրառումը. 20%

- Ակտիվ համագործակցություն համայնքում գործող հաշմանդամ անձանց հիմնահարցերով զբաղվող հ/կ-ների հետ:

IV. Բյուջեն. 20%

- Առաջարկվող աշխատանքների և բյուջեի միջև համապատասխանությունը,
- Ծախսարդյունավետությունը:

VI. Գրամաշնորհի միջոցների օգտագործում

Գրամաշնորհի միջոցները կարող են օգտագործվել միայն այն աշխատանքների համար, որոնք անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ:

VII. Որոշումների կայացման գործընթացը և մրցույթի ժամանակացույցը

Հայտերի ներկայացումից առաջ անցկացվելիք խորհրդատվական բնույթի սեմինարի ընթացքում սահմանափակ աջակցություն կցուցաբերվի շահագրգիռ կազմակերպություններին՝ հայտերի պատրաստման ուղղությամբ: Նշված սեմինարը տեղի կունենա ՍՊՀՀ-ի ծրագրի գրասենյակում 2009թ. մարտի 24-ին, ժ.15:00-ին: Անհատական խորհրդատվություն չի տրամադրվի:

Մրցույթի ժամանակացույցը.

Մրցույթի հայտարարում.	2009 թ. մարտի 16-ին
Մրցույթից առաջ անցկացվող սեմինար.	2009 թ. մարտի 24-ին
Իրականացված աշխատանքների վերաբերյալ հայտերի ներկայացման վերջնաժամկետ.	2009 թ. ապրիլի 6-ին
Մրցույթի հաղթողների հայտարարում.	2009 թ. մայիսի 6-ին

Առաջարկների ուսումնասիրման և ընտրության գործընթացը կիրականացվի երկու փուլով.

1. Առաջարկների նախնական ուսումնասիրում
2. Առաջարկների ընտրության չափանիշներին համապատասխան լավագույն առաջարկի ընտրություն՝ ՀՀ ԱՍՀՆ-ի, ԱՄՆ ՄՁԳ-ի, ՍՊՀՀ ծրագրի, և անկախ փորձագետներից կազմված հանձնաժողովի կողմից:

Գրամաշնորհի տրամադրման կարգը կիրականացվի ԱՄՆ ՄՁԳ-ի քաղաքականությանը համապատասխան: Կստորագրվի դրամաշնորհային պայմանագիր՝ բոլոր անհրաժեշտ հավելվածներով և ծրագրի հիմնական աշխատակազմի համար կանցկացվի դրամաշնորհի կառավարման սեմինար:

VII. Հայտերի ներկայացման կարգ

1. Հայտատուն պետք է ներկայացնի ծրագրի առաջարկը հայերեն լեզվով, որը պետք է համապատասխանի սույն Առաջարկում նախատեսված պահանջներին: Ծրագրի առաջարկները պետք է հաստատված և ստորագրված լինեն համայնքի ղեկավարի և իրականացնող հասարակական կազմակերպության տնօրենի կողմից՝ նշելով հետևյալը՝ «Մատչելի համայնք ծրագրի առաջարկ»:

2. Չստորագրված առաջարկը չի ընդունվի:

3. Մրցույթին ներկայացված ցանկացած նյութ և փաստաթուղթ ենթակա չէ վերադարձման:

4. Առաջարկը պետք է բաղկացած լինի հետևյալ բաժիններից.

- Դիմումի մեջ նշված տվյալները հայտատու համայնքի և հասարակական կազմակերպության մասին,
- Ծրագրով նախատեսված գործողությունները և աշխատանքները,
- Իրականացման ժամկետները,
- Նախատեսված աշխատանքների համար անհրաժեշտ միջոցները

Հայտատուների կողմից ներկայացված տեղեկատվության գաղտնիությունը երաշխավորվում է՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսվող դեպքերի:

VIII. Հասցեն և կոնտակտային տվյալներ

Հայտերը պետք է ներկայացվեն մինչև 2009թ. ապրիլի 6, ժ. 17.00 հետևյալ հասցեով.

Հայաստան 0019, Երևան,

Բաղրամյան պողոտա 18, (մուտքը Չառուբյան փողոցից),

ՍՊՀՀ ծրագրի գրասենյակ:

Մանրամասների համար խնդրում ենք դիմել Զրիստինե Գրիգորյանին, էլ. փոստ՝ kgrig@spss.am, հեռ.՝ (374 10) 54 26 11: